



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

АГЕНТСТВО ИНТЕЛЛЕКТУАЛЬНОЙ
СОБСТВЕННОСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ՏԵՂԵԿԱԳԻՐ

ОФИЦИАЛЬНЫЙ
БЮЛЛЕТЕНЬ

№ **1** (41)

ՄԱՍ
ЧАСТЬ **1**

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ПРОМЫШЛЕННАЯ СОБСТВЕННОСТЬ

Սույն տեղեկագրում
գետեղված տեղեկությունները
համարվում են հրապարակված 2007 թվականի մարտի 15-ից

Մ Ա Ս 1

ԳՅՈՒՏԵՐ	4, 204
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին</i>	6, 206
ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ	24, 223
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին</i>	26, 225
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ.....	27, 226
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին.....</i>	29, 228
ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ	32
<i>Տեղեկություններ գրանցված ապրանքային եւ սպասարկման նշանների մասին</i>	34
<i>Տեղեկություններ ապրանքային նշանների գրանցման գործողության երկարաձգման մասին</i>	180
ՑՈՒՑԻՉՆԵՐ	190
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	193
ԵՐԿՏԱՌ ԿՈՂԵՐԸ	229

Մ Ա Ս 2

<i>ՖԻՐՄԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐ</i>	4
<i>Տեղեկություններ 2005թ. գրանցված ֆիրմային անվանումների մասին</i>	6

Հրատարակվում է Մտավոր սեփականության
գործակալության կողմից 1995թ.

0010, Երեւան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
Հեռ. 563-258 հայտերի ընդունման բաժին
Հեռ. 561-126 տեղեկատվական-տեխնոլոգիական
ապահովման բաժին

Издаётся Агентством интеллектуальной
собственности с 1995г.

0010, Ереван, Главный проспект, Дом Правительства 3
Тел. (374 10) 563-258 отдел приема заявок
Тел. (374 10) 561-126 отдел информационно-
технологического обеспечения

СОДЕРЖАНИЕ

ЧАСТЬ 1

ИЗОБРЕТЕНИЯ.....	4, 204
Сведения о выданных патентах.....	6, 206
ПОЛЕЗНЫЕ МОДЕЛИ.....	24, 223
Сведения о выданных патентах.....	26, 225
ПРОМЫШЛЕННЫЕ ОБРАЗЦЫ.....	27, 226
Сведения о выданных патентах.....	29, 228
ТОВАРНЫЕ ЗНАКИ.....	32
Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания	34
Сведения о продлении действия регистрации товарных знаков.....	180
УКАЗАТЕЛИ.....	190
СООБЩЕНИЯ.....	193
ДВУБУКВЕННЫЕ КОДЫ.....	229

ЧАСТЬ 2

ФИРМЕННЫЕ НАИМЕНОВАНИЯ	4
Сведения о зарегистрированных заявках фирменных наименований в 2005 г.	6

CONTENTS

PART 1

INVENTIONS.....	4, 204
Information on granted patents.....	6, 206
UTILITY MODELS.....	24, 223
Information on granted patents.....	26, 225
INDUSTRIAL DESIGNS.....	27, 226
Information on granted patents.....	29, 228
TRADE MARKS.....	32
Information on registered trade marks and service marks	34
Information on renewal of effect of trademark registration	180
INDEXES.....	190
REPORTS.....	193
TWO-LETTER CODES.....	229

PART 2

TRADE NAMES.....	4
Information on registered firm name's applications in 2005.	6

q3ntStr

**Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների
նույնականացման միջազգային կոդերը
ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի**

11	արտոնագրի համարը
13	փաստաթղթի տեսակի կոդը
	A1 Գյուտի հիմնական արտոնագիր
	A2 Գյուտի նախնական արտոնագիր
	B2 Նախնական արտոնագրով նախկինում պահպանված գյուտի հիմնական արտոնագիր
21	հայտի համարը
22	հայտի ներկայացման թվականը
23	լրացուցիչ նյութերի ստացման թվականով որոշված առաջնություն
24	արտոնագրով վերապահված իրավունքների գործողության սկիզբը
31	առաջնային հայտի համարը
32	առաջնային հայտի ներկայացման թվականը
33	երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը
42	հայտը համընդհանուր ծանոթացման դնելու թվականը
44	գյուտի նախնական արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը
45	գյուտի հիմնական արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը
51	միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)
54	գյուտի անվանումը
56	տեղեկատվության աղբյուրներ
57	գյուտի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը
62	ավելի վաղ ներկայացված հայտի համարը եւ ստացման թվականը, որից զատված է տվյալ հայտը
65	հայտին վերաբերող ավելի վաղ հրապարակված արտոնագրային փաստաթղթի համարը
71	հայտատու, երկրի կոդը
72	գյուտի հեղինակը (ները), երկրի կոդը
73	արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը
74	արտոնագրային հավատարմատար
85	միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը
86	միջազգային հայտի (PCT) համարը եւ ներկայացման թվականը
87	միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը եւ թվականը

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) (2006) (11) 1897 (13) A2
A01B 79/00
C09K 17/00
(21) AM20060098 (22) 20.06.2006
(42) 01.08.2006
(71) «ՀՀ ԳԱԱ Ընդհանուր եւ անօդաչուական քիմիայի ինստիտուտ» պետական ոչ առետրային կազմակերպություն (AM)
(72) Ռիմա Վարազդատի Մանուկյան (AM), Մանուշակ Ալբերտի Ապրեսյան (AM), Արա Մերուժանի Արսենյան (AM)
(73) «ՀՀ ԳԱԱ Ընդհանուր եւ անօդաչուական քիմիայի ինստիտուտ» պետական ոչ առետրային կազմակերպություն, Երեւան, Արդուության փող. 2-րդ նրբ. 10 (AM)
(54) **Հողի մշակման եղանակ**
(57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսությանը: Հողի մշակումն իրականացնում են զանգվածային (1,0-5,0):(0,05-0,1):(0,1-0,15) հարաբերակցությամբ բազմաէթիլիդրոսիլոքսան, ժելատին եւ լցանյութ պարունակող ջրամեկուսիչ բաղադրանյութի 1-5%-անոց ջրային լուծույթով:
Եղանակը ապահովում է ոռոգման ջրի խնայողություն եւ բերքատվության բարձրացում:

(51) (2006) (11) 1898 (13) A2
A01C 7/00
(21) AM20060111 (22) 14.07.2006
(42) 01.09.2006
(71) Վահան Լեւոնի Բադալյան (AM)
(72) Սիմոն Վլադիմիրի Ռաֆայելյան (AM), Վահան Լեւոնի Բադալյան (AM)
(73) Վահան Լեւոնի Բադալյան, 2210, Կոտայքի մարզ, Աբովյան, Սարալանջի 4, բն.38 (AM)
(54) **Ակոսակոճային սերմնահան ապարատ**
(57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսական մեքենաշինությանը, մասնավորապես՝ սերմնահան ապարատներին:

Ապարատն ունի սերմնատուփ, դրա մեջ լիսեռի վրա պտտման եւ առանցքային ուղղությամբ տեղաշարժվելու հնարավորությամբ տեղակայված գլանաձեւ եռաստիճան ակոսակոճ, այն պարփակող անգործարար կոճ, որն ունի ա-

կոսակոճի նկատմամբ տեղաշարժվելու եւ դրա վրա սեւեռման հնարավորություն: Սերմնատուփի վրա տեղակայված են կոճի տեղաշարժի հետեւանքով առաջացած բացակները փակող ըստ բարձրության կարգավորվող թիթեղներ:

Ապահովվում է սերմերի հավասարաչափ դուրսբերումը, նվազեցվում է սերմերի մեխանիկական վնասվածքը, 3 նկ.:

(51) (2006) (11) 1899 (13) A2
A22C 17/00
(21) AM20060081 (22) 12.05.2006
(42) 01.08.2006
(71) Հակոբ Բարսեղյան (AM), Աննա Հարությունյան (AM)
(72) Հակոբ Բարսեղյան (AM), Աննա Հարությունյան (AM)
(73) Հակոբ Բարսեղյան, Գյումրի, Արագած 6-րդ թաղամաս 2, բն.11 (AM), Աննա Հարությունյան, Գյումրի, Վահան Չերազի 19, բն. 36 (AM)
(54) **Ճարպակտրիչ մեքենա**
(57) Գյուտը վերաբերում է մսամթերքի մշակմանը, մասնավորապես՝ երշիկների արտադրության մեջ ճարպի կտրման մեքենաներին:

Մեքենան ունի զետեղարան, սայլակ, փոխող-դահայաց հարթություններում տեղակայված երկայնական եւ լայնական բազմասկավառակային դանակների բլոկներ, հորիզոնական պտտվող սկավառակային դանակ եւ սայլակի հետադարձ-առաջընթաց տեղափոխման մեխանիզմ, որն ունի դրա երկու կողմերում տեղակայված միմյանց զուգահեռ ընթացքային պտուտակներ եւ երկու ուղղորդիչներ: Սայլակը երկու զույգ գլորման հենարաններով տեղակայված է ուղղորդիչների ակոսներում եւ զույգ մանեկների միջոցով կինեմատիկորեն կապված է ընթացքային պտուտակներին, որոնք կինեմատիկորեն կապված են տանող լիսեռին:

Ապահովվում է բազմասկավառակային դանակների բլոկների նկատմամբ սայլակի գծային տեղափոխման ճշտությունը, 2 նկ.:

- (51) (2006) (11) 1900 (13) A2
A23L 1/48
(21) AM20060090 (22) 08.06.2006
(42) 02.10.2006
(71) Գեղամ Սևապյան (AM), Տատյանա Մկրտչյան (AM), Նելլի Սարկիսյան (AM), Գայանե Նիկողոսյան (AM)
(72) Գեղամ Սևապյան (AM), Տատյանա Մկրտչյան (AM), Նելլի Սարկիսյան (AM), Գայանե Նիկողոսյան (AM)
(73) Գեղամ Սևապյան, Երեւան, Էրեբունու 11, բն. 37 (AM), Տատյանա Մկրտչյան, Երեւան, Էրեբունու 11, բն. 37 (AM), Նելլի Սարկիսյան, Երեւան, Անդրանիկի 74, բն. 30 (AM), Գայանե Նիկողոսյան, Երեւան, Իսահակյան 1/1, բն. 24 (AM)
(54) **Ջրագրկված սննդամթերքի պատրաստման եղանակ**
(57) Գյուտը վերաբերում է սննդի արդյունաբերությանը եւ կարող է կիրառվել ջրագրկված սննդային մթերքի պատրաստման համար:
Սննդային մթերքի բաղադրամասերը ենթարկում են ջերմամշակման, մանրացնում են ձեւավորում են: Ստացված զանգվածը ջրագրկում են երկփուլ չորացմամբ, առաջին փուլում՝ 45-50°C ջերմաստիճանում մինչեւ 22% մնացորդային խոնավություն ստանալը, իսկ երկրորդ փուլում՝ 90°C ջերմաստիճանում 5-8 ժամի ընթացքում եւ փաթեթավորում են, ընդ որում սննդային մթերքի բաղադրամասերը վերցնում են հետեւյալ հարաբերակցությամբ (զանգվ. %). բանջարեղեն՝ 48.0 - 62.0, ընկուզապտուղների միջուկ՝ 21.0 - 32.8, ցորենի ալյուր՝ 4.3 - 7.5, սխտոր տրորած՝ 4.1 - 5.4, աղ կերակրի՝ 2.0 - 2.5, խմելի-սուճեղի՝ 1.5 - 2.2, պղպեղ սեւ՝ 1.0 - 1.1, պղպեղ կարմիր՝ 1.0 - 1.05, ուրց՝ 0.0 - 1.0, խմելու սոդա՝ 0.05 - 0.1, կիտրոնաթթու կամ ասկորբինաթթու՝ 0.03 - 0.05:
Ապահովվում է սննդային մթերքի երկարաժամկետ պահպանումը:
- (51) (2006) (11) 1901 (13) A2
A23L 1/212
(21) AM20060084 (22) 22.05.2006
(42) 01.09.2006
(71) Գեղամ Սևապյան (AM), Տատյանա Մկրտչյան (AM), Նելլի Սարկիսյան (AM), Գայանե Նիկողոսյան (AM)

- (72) Գեղամ Սևապյան (AM), Տատյանա Մկրտչյան (AM), Նելլի Սարկիսյան (AM), Գայանե Նիկողոսյան (AM)
(73) Գեղամ Սևապյան, Երեւան, Էրեբունու 11, բն.37 (AM), Տատյանա Մկրտչյան, Երեւան, Էրեբունու 11, բն.37 (AM), Նելլի Սարկիսյան, Երեւան, Անդրանիկի 74, բն. 30 (AM), Գայանե Նիկողոսյան, Երեւան, Իսահակյան 1/1, բն.24 (AM)
(54) **Պտղահատապտղային աղանդերի պատրաստման եղանակ**
(57) Պատրաստում են պտղահատապտղային խյուս, եփաթանձրացնում այն մինչեւ 83-87% մնացորդային խոնավության հասնելը, ավելացնում շաքարավազ՝ խյուսի զանգվածի 4,8-15,25% հաշվարկով, ու ցորենի ալյուր՝ խյուսի զանգվածի 1% հաշվարկով: Ստացված շփոթը եփաթանձրացնում են մինչեւ 72-74% մնացորդային խոնավության հասնելը, լցնում անոթի մեջ 10 մմ շերտով եւ ջրագրկում մինչեւ 22% մնացորդային խոնավության հասնելը: Շերտը վրադրում են պատրաստված 10 մմ հաստությամբ լցնով, լցոնը պատում համանման ջրագրկված շերտով եւ ստացված մթերքը ջրագրկում մինչեւ 22% մնացորդային խոնավության հասնելը: Լցոնը պատրաստում են շփոթից եւ ընկույզի եւ/կամ տխիլի եւ/կամ նշի միջուկներից եւ/կամ շաքարաչրից, եւ/կամ պտղաչրից զանգվածային 1:1 հարաբերակցությամբ եւ համեմունքից՝ դարչին՝ լցոնի զանգվածի հաշվարկով 0,8%, հիլ՝ 0,4% եւ մեխակ՝ 0,4%: Միացված շերտերը ջրագրկում են մինչեւ 22% մնացորդային խոնավության հասնելը:
Բարձրացվում է մթերքի սննդային արժեքը:

- (51) (2006) (11) 1902 (13) A2
A43B 13/38
(21) AM20060113 (22) 17.07.2006
(42) 01.08.2006
(71) Աննա Կարեգինի Սինոպյան (AM), Արուսյակ Յովհաննեսի Մանուկյան (AM), Ալեքսան Մկրտչի Արզումանյան (AM)
(72) Աննա Կարեգինի Սինոպյան (AM), Արուսյակ Յովհաննեսի Մանուկյան (AM), Ալեքսան Մկրտչի Արզումանյան (AM)
(73) Աննա Կարեգինի Սինոպյան, 3103, Գյումրի, Իսահակյան 8, բն. 52 (AM), Արուսյակ Յովհաննեսի Մանուկյան, 3106, Գյումրի, Լազոյի 47 (AM),

Ալեքսան Մկրտչի Արզումանյան, 3102, Գյումրի, Մեյան 47, բն. 5 (AM)

(54) Միջատակ

(57) Գյուտը վերաբերում է կոշիկի արտադրությանը, մասնավորապես՝ ներբանների միջատակերին, եւ կարող է օգտագործվել միջին եւ բարձր կրունկներով կոշիկների ներքին մասերի պատրաստման համար:

Միջատակի վերհակիչային շերտն ունի կրունկից մինչեւ նախագարշապարի մատնահատվածի հողավորման տեղամասը ձգվող ելուստ: Ելուստի բարձրությունը չի գերազանցում միջատակի հաստությունը, իսկ երկարությունը՝ կրունկից միջեւ հելենոկային մասը:

Բարձրացվում է միջատակի կայունության աստիճանը, 2 նկ.:

(51) (2006) (11) 1903 (13) A2
A61C 8/00

(21) AM20060126 (22) 26.07.2006

(42) 02.10.2006

(71) Յուրի Պողոսյան (AM), Աննա Պողոսյան (AM), Դավիթ Պողոսյան (AM)

(72) Յուրի Պողոսյան (AM), Աննա Պողոսյան (AM), Դավիթ Պողոսյան (AM)

(73) Յուրի Պողոսյան, Արարատի մարզ, Նոր Խարբերդ 10/14 (AM), Աննա Պողոսյան, Երեւան, Նալբանդյան 25/14, բն. 104 (AM), Դավիթ Պողոսյան, Երեւան, Համբարձումյան 18, բն. 41 (AM)

(54) Վերին ծնոտի ենթավերնոսկրային ատամնային իմպլանտացիայի եղանակ

(57) Մերկացնում են վերին ծնոտի ատամնաբանին ելունը, բարձրացնում են վերին ծնոտի ծոցի հատակը: Այնուհետեւ ձեւավորում են ակոսներ ատամնային իմպլանտատի գլխիկների հիմքի եւ անդրաձիգ տարրերի համար եւ ստանում են ատամնաբանային ելունի դրոշմը, որի ձեւով պատրաստում են իմպլանտատը, ապա այն տեղադրում են եւ սեւեռում:

Կանխարգելվում է վերին ծնոտի ծոցի պերֆորացիան:

(51) (2006) (11) 1904 (13) A2
A61K 36/00

(21) AM20060054 (22) 07.04.2006

(42) 01.08.2006

(71) Արամայիս Աղաջանյան (AM)

(72) Արամայիս Աղաջանյան (AM), Անի Չախարյան (AM)

(73) Արամայիս Աղաջանյան, Երեւան, Գայի 4, բն. 86 (AM)

(54) Շագանակագեղձի բորբոքման հետեւանքով առաջացած անսեռունակության բուժման պատրաստուկ ըստ Աղաջանյանի

(57) Գյուտը վերաբերում է դեղագործական պատրաստուկներին եւ կարող է օգտագործվել շագանակագեղձի բորբոքման հետեւանքով առաջացած անսեռունակության բուժման համար: Պատրաստուկը ներառում է ընկուզենի սովորականի եւ տիլենի սովորականի պտուղների միջուկ, արեւածաղկի սերմ, մեղր, սեխի սերմ եւ էթիլային սպիրտ բաղադրամասերի հետեւյալ հարաբերակցությամբ (զանգվ. %). ընկուզենի սովորականի պտուղների միջուկ՝ 5,02, տիլենի սովորականի պտուղների միջուկ՝ 2,51, արեւածաղկի սերմ՝ 1,50, մեղր՝ 2,51, սեխի սերմ՝ 1,50, էթիլային սպիրտ՝ 86,96:

Կրճատվում է բուժման տեւողությունը:

(51) (2006) (11) 1905 (13) A2
A61K 36/00

(21) AM20060055 (22) 07.04.2006

(42) 01.08.2006

(71) Արամայիս Աղաջանյան (AM)

(72) Արամայիս Աղաջանյան (AM), Հասմիկ Կարապետյան (AM)

(73) Արամայիս Աղաջանյան, Երեւան, Գայի 4, բն. 86 (AM)

(54) Հակաոսկրափշային պատրաստուկ «Շպորիտ» ըստ Աղաջանյանի

(57) Գյուտը վերաբերում է դեղագործական պատրաստուկներին եւ կարող է օգտագործվել ոսկրափշային հիվանդությունների բուժման համար:

Պատրաստուկը ներառում է անուշադրի սպիրտ, քափուրի բյուրեղներ, էթիլային սպիրտ, գեղավեր դաշտայինի ծաղիկներ եւ տաքդեղ սովորականի պտուղներ բաղադրամասերի հետեւյալ հարաբերակցությամբ (զանգվ. %). անուշադրի սպիրտ՝ 1,15, քափուրի բյուրեղներ՝ 1,15, էթիլային սպիրտ՝ 96,0, գեղավեր դաշտայինի ծաղիկներ՝ 0,55, տաքդեղ սովորականի պտուղներ՝ 1,15:

Կրճատվում է բուժման տեւողությունը:

(51) (2006) (11) 1906 (13) A2
A61K 39/135

(21) AM20060044 (22) 28.03.2006
(42) 02.10.2006

(71) Սլավա Երվանդի Ներսիսյան (AM)
(72) Սլավա Երվանդի Ներսիսյան (AM), Ժան Իշխանի Հակոբյան (AM), Լեւոն Աշոտի Ռուխկյան (AM), Տիգրան Հակոբի Մարկոսյան (AM), Հենրիկ Եղիշեի Ոսկանյան (AM), Խաչիկ Վազգենի Սարգսյան (AM), Մարինե Բենիկի Ղազարյան (AM)

(73) Սլավա Երվանդի Ներսիսյան, Երեւան, Գայի պող. 2, բն.118 (AM)

(54) **Հակադաբաղային պատվաստանյութ**

(57) Գյուտը վերաբերում է անասնաբուժական կենսատեխնոլոգիային եւ կարող է կիրառվել խոշոր եւ մանր եղջյուրավոր անասունների դաբաղի կանխարգելման համար:

Հայտարարվող հակադաբաղային պատվաստանյութը ներառում է A₂₂ տիպի դաբաղի լապինիզացված վիրուսի N550 շտամից (BHIЯИ N550) եւ O₁ տիպի դաբաղի լապինիզացված վիրուսի N194 շտամից (BHIЯИ N194) ստացված հակազենային նյութեր, ալյումինի հիդրօքսիդի դոնորը եւ որպես ադյուվանտ՝ երկաթարույր ՌՆԹ-ի կալցիումական ձեւը: Պատվաստանյութում հակազենային նյութերի հարաբերակցությունը 1:1 է: Բաղադրամասերը վերցված են հետեւյալ հարաբերակցությամբ (զանգվ.%)՝ հակազենային նյութեր՝ 64,4-69,6, ալյումինիումի հիդրօքսիդի դոնորը՝ 30,0-35,0, երկաթարույր ՌՆԹ-ի կալցիումական ձեւ՝ 0,4-0,6:

Բարձրացվում է պատվաստանյութի իմունազենային ակտիվությունը եւ ապահովվում է երկարատեւ լարված իմունիտետի ձեւավորումը:

(51) (2006) (11) 1907 (13) B2
A61M 5/32
A61M 5/50

(21) AM20040097 (22) 02.12.2002
(85) 30.07.2004

(86) PCT/US2002/033003, 02.12.2002

(87) WO2004/060451A1 22.07.2004

(42) 13.12.2004

(31) PCT/US2002/033003 (32) 02.12.2002 (33) WO

(71) Ռիտրաքտեյբլ Տեքնոլոջիզ, ԻՆՔ (US)

(72) Շոու Թոմաս Ջ. (US), Չու Ջուդի (US)

(73) Ռիտրաքտեյբլ Տեքնոլոջիզ, ԻՆՔ (US)

(74) Ա. Գալոյան

(54) **Ասեղը ներքաշող եւ հարկադրաբար պահող միանգամյա օգտագործման ներարկոց (տարբերակներ)**

(57) Գյուտը վերաբերում է բժշկական տեխնիկայի բնագավառին, մասնավորապես՝ ասեղը ներքաշող ներարկոցներին, որոնք չեն կարող կրկին անգամ օգտագործվել ներարկման ավարտից հետո:

Ներարկոցն ունի բաց հետին ծայրով երկարացված խողովակաձեւ իրան, ներքաշվող ասեղ, խողովակաձեւ իրանի առջեւի մասում գտնվող ներքաշման հանգույց, ներքաշվող ասեղի պահման համար ներարկոցի խողովակաձեւ իրանից ոչ հանովի շարժուն խցիկ, որի առջեւի մասում կա ներքաշվող ասեղի ընդունման բացվող խցված անցք: Ներարկոցն ունի շարժուն տարր, որի բռնակը դուրս է բերված խողովակաձեւ իրանի բաց հետին ծայրից, իսկ վերին մասը գործակցում է ներքաշվող ասեղի պահման խցիկի հետ: Բռնակը եւ ներքաշվող ասեղի պահման խցիկը միասին ներարկոցի սուզակն են եւ հերմետիկորեն տեղակայված են ներարկոցի խողովակաձեւ իրանում սահելու հնարավորությամբ: Ներքաշվող ասեղը կատարված է ներարկումը կատարելուց հետո ներքաշման հանգույցի միջոցով ասեղի պահման խցիկ ներքաշվելու հնարավորությամբ եւ հետագայում բռնակի միջոցով հանելու անհնարիությամբ:

Խողովակաձեւ իրանում տեղակայված է նաեւ հարկադրական բլոկավորման հանգույց, որը կատարված է բռնակի հետադարձ ուղղությամբ տեղաշարժումը սահմանափակելու եւ այն խողովակաձեւ իրանից հեռացնելը կանխարգելելու հնարավորությամբ:

Գյուտի տարբերակներն ունեն հարկադրական բլոկավորման հանգույցի տարբեր կառուցվածքներ:

Բարձրացվում է ներարկոցի աշխատանքի հուսալիությունը, ապահովվում է օգտագործողի անվտանգությունը, 4 անկախ կետ, 19 նկ.:

(51) (2006) (11) 1908 (13) A2
A63B 1/00

(21) AM20060148 (22) 30.08.2006

(42) 02.10.2006

(71) Կարեն Վարդանյան (AM)

(72) Կարեն Վարդանյան (AM)
(73) Կարեն Վարդանյան, Երեւան, Դ. Դեմիրճյան փող. փակ. 33 (AM)

(54) Մարմնամարզական սարք

(57) Գյուտը վերաբերում է մարմնամարզական սարքերին եւ կարող է կիրառվել տնային պայմաններում եւ մարզադահլիճներում:

Սարքն ունի անշարժ մակերեսային վրա ամրակցվող առնվազն մեկ հենարանային տարր, որն ունի իր համաչափության առանցքի ուղղությամբ երկայնական ուղղորդիչ փորակ եւ լայնական թեք փորակներ: Փորակի մեջ տեղադրված է սողան, որին կոշտ ամրակցված է չորսվակ: Չորսվակը տրված բարձրության վրա սեւեռելու համար թեք փորակի մեջ տեղադրում են զոլակ: Հենարանային տարրերը կարող են ամրակցվել երկու զուգահեռ կամ ուղղահայաց, ինչպես նաեւ մեկ պատի վրա:

Լայնացվում են սարքի օգտագործման հնարավորությունները, 3 նկ.:

(51) (2006) (11) 1909 (13) A2
A63F 3/02

(21) AM20060097 (22) 19.06.2006
(42) 01.09.2006
(71) Ռազմիկ Վաղարշակի Այվազյան (AM)
(72) Ռազմիկ Վաղարշակի Այվազյան (AM)
(73) Ռազմիկ Վաղարշակի Այվազյան, Երեւան, Արաբկիրի 39 փող. 2, բն. 40 (AM)

(54) Սեղանի խաղ

(57) Խաղն ունի 100 վանդականոց շախմատային տախտակ, երկու խումբ շախմատային ֆիգուրներ, որոնցից յուրաքանչյուրն ունի 10 զինվոր, 8 ավանդական շախմատային ֆիգուր եւ 2 լրացուցիչ տարատեսակ ֆիգուր: Լրացուցիչ ֆիգուրները «Վագր» եւ «Կարդինալ» են: Շախմատային տախտակի B4, B7 եւ F4, F7 վանդակների վրա ամրակցված են օղակաձեւ, իսկ D4, D7 եւ V4, V7 վանդակների վրա՝ խաչաձեւ թիթեղներ:

Ընդլայնվում են խաղի հնարավորությունները, 8 նկ., 1 աղյուսակ:

(51) (2006) (11) 1910 (13) A2
B01J 20/06
B01J 20/10
C02F 1/28

(21) AM20060130 (22) 27.07.2006
(42) 02.10.2006
(71) Գագիկ Հովհաննեսի Թորոսյան (AM), Աիդա Ռազմիկի Ալեքսանյան (AM)
(72) Գագիկ Հովհաննեսի Թորոսյան (AM), Աիդա Ռազմիկի Ալեքսանյան (AM), Վիլենա Հակոբի Մարտիրոսյան (AM)
(73) Գագիկ Հովհաննեսի Թորոսյան, Երեւան, Սայաթ-Նովայի պող. 37, բն. 10 (AM), Աիդա Ռազմիկի Ալեքսանյան, Երեւան, Ավան թաղամաս, Զուլալի 18, բն. 22 (AM)

(54) Անիլին պարունակող հոսքաշրերի մաքրման կլանիչ

(57) Գյուտը վերաբերում է բնապահպանությանը: Կլանիչը պարունակում է հետեւյալ բաղադրամասերը, գանգվ.%. ալյումինի օքսիդ՝ 29,9-36,0, կալցիումի սուլֆիդ՝ 50,50-58,55, սիլիցիումի օքսիդ՝ 7,4-9,0, նատրիումի օքսիդ՝ 3,4-4,5:

Ապահովվում է հոսքաշրերի մաքրման բարձր աստիճանը:

(51) (2006) (11) 1911 (13) A2
B08B 5/00
B23Q 11/00

(21) AM20060085 (22) 25.05.2006
(42) 03.07.2006
(71) Լեւոն Ռաֆայելի Պողոսյան (AM)
(72) Լեւոն Ռաֆայելի Պողոսյան (AM)
(73) Լեւոն Ռաֆայելի Պողոսյան, Երեւան, Կոմիտասի 32, բն. 44 (AM)

(54) Փոշեորսիչ

(57) Գյուտը վերաբերում է արտածծման միջոցով փոշու հեռացմանը, մասնավորապես՝ մեքենայացված կտրող գործիքներով ցածր խտության փխրուն նյութերից պատրաստվող իրերի մշակումից առաջացող փոշենման մնացուկների հեռացմանը:

Փոշեորսիչն ունի կտրող գործիքի իւր շրջապատող ու դրան համառանցք տեղադրված գլանաձեւ խոռոչի տեսքով իրագործված եւ պնեմատարածող հանգույցին միացված ներծծման խցիկ, որը մշակվող իրին ուղղված կողմից

բաց է, իսկ հակառակ կողմից՝ փակ: Պնեւմաարտածող հանգույցին միանալու համար ներծծման խցիկն ունի կտրող գործիքի պտույտի ուղղությամբ իրենից շոշափողով հեռացվող եւ իր շրջանաձեւ պարագծի երկարությամբ հավասարաչափ բաշխված առնվազն երկու գլանաձեւ խուղակներ:

Բարձրացվում է փոշեման մնացուկների հեռացման արդյունավետությունը, 3 նկ.:

(51) (2006) (11) 1912 (13) A2
B21D 11/00
B26D 3/16
(21) AM20060104 (22) 30.06.2006
(42) 01.08.2006
(71) Կարեն Վոլոդյայի Գասպարյան (AM), Պատվական Ռուբենի Յախինյան (AM)
(72) Կարեն Վոլոդյայի Գասպարյան (AM), Պատվական Ռուբենի Յախինյան (AM)
(73) Կարեն Վոլոդյայի Գասպարյան, Երեւան, Լեփսիուսի 10ա, բն. 18 (AM), Պատվական Ռուբենի Յախինյան, Երեւան, Մ. Մելիքյան 13, բն. 23 (AM)
(54) Ամրանների ծռման եւ կտրման սարք
(57) Գյուտը վերաբերում է փականագործական ձեռքի սարքերին եւ կարող է կիրառվել մինչեւ 19 մմ տրամագծի շինարարական ամրանների ծռման եւ կտրման համար:

Սարքն ունի հորիզոնական հենարանային եւ ուղղաձիգ մոնտաժային սալերից կազմված իրան եւ նրա վրա տեղակայված ծռման, կտրման եւ դարձկեն դանակի արագ առբերման հանգույցներ եւ շարժաբեր լծակի հետ դրանց կապի միջոցներ:

Ծռման հանգույցը ներառում է ծռող մատներ եւ հենակային տարր ունեցող ուժային սալ, իսկ շարժաբեր լծակի հետ կապն իրականացված է կառչման մեջ գտնվող երկու ատամնավոր սեկտորների տեսքով, որոնցից մեկը կոշտ ամրակցված է շարժաբեր լծակին, իսկ մյուսը՝ ուժային սալին:

Կտրման հանգույցը ներառում է անշարժ եւ դարձկեն դանակներ, իսկ շարժաբեր լծակի հետ կապն իրականացված է կառչման մեջ գտնվող երկու ատամնավոր սեկտորների տեսքով, որոնցից մեկը կոշտ ամրակցված է դարձկեն դանակին, իսկ մյուսը՝ արգելանվին: Արգելանվին ու-

նի սեւեռիչ շնիկ եւ կապված է շարժաբեր լծակի հետ ուժային շնիկի եւ արագ առբերման շարժաբերի միջոցով:

Մեծացվում է զարգացվող ուժը, բարելավվում են սարքի երգոնոմիական ցուցանիշները, 10 նկ.:

(51) (2006) (11) 1913 (13) A2
C04B 14/00
C08K 13/00
(21) AM20060073 (22) 02.05.2006
(42) 03.07.2006
(71) Նինել Վադինակի Գուրգենյան (AM), Վարդգես Անդրանիկի Մանուկյան (AM)
(72) Նինել Վադինակի Գուրգենյան (AM), Վարդգես Անդրանիկի Մանուկյան (AM)
(73) Նինել Վադինակի Գուրգենյան, Երեւան, Մուրովական 13, բն. 2 (AM), Վարդգես Անդրանիկի Մանուկյան, Երեւան, Չաքարիա Սարկավագի 151/4, բն. 7 (AM)
(54) Ջերմամեկուսիչ իրերի պատրաստման եղանակ եւ տեխնոլոգիական գիծ
(57) Ջերմամեկուսիչ իրերի պատրաստման եղանակը ներառում է փքապեռլիտի եւ օրգանական լուծիչ պարունակող կապակցանյութի խառնում, ստացված խառնուրդի ձեւավորում եւ պատրաստի իրերի չորացում, ընդ որում բաղադրամասերը խառնելուց առաջ փքապեռլիտը հագեցնում են օրգանական լուծիչով, իսկ խառնուրդի բաղադրամասերը վերցնում են հետեւյալ հարաբերակցությամբ, զանգվածային % օրգանական լուծիչով հագեցած փքապեռլիտ՝ 20-80, կապակցանյութ՝ 20-80:

Ջերմամեկուսիչ իրերի պատրաստման տեխնոլոգիական գիծն ունի տեխնոլոգիական հաջորդականությամբ տեղադրված եւ փոխադրման միջոցներով կապված բաժնավորիչով փքապեռլիտի բունկեր, կապակցանյութի եւ լուծիչի բաքեր, խառնիչ, իրերի ձեւավորման հանգույց, չորացման ապարատ եւ պատրաստի իրերի ընդունիչ: Լուծիչի բաքին միացված է արտաթողման ծորակ ունեցող փքապեռլիտի լուծիչով հագեցման բաք, դրա տակ տեղակայված քամիչ եւ օգտագործած լուծիչի բաք, խառնիչին միացված լուծիչով հագեցած եւ քամած փքապեռլիտի բաք եւ չորացման ապարատին միացված

լուծիչի խտարար, ընդ որում օգտագործած լուծիչի բաքը եւ լուծիչի խտարարը խողովակներով միացված են լուծիչի բաքին:

Բարձրացվում է ջերմամեկուսիչ իրերի ամրությունը եւ փոքրացվում դրանց գծային ջերմաստիճանային կծկումը, 2 անկախ կետ, 1 նկ:

- (51) (2006) (11) 1914 (13) A2
C04B 26/00
(21) AM20060093 (22) 12.06.2006
(42) 01.08.2006
(71) Սերգեյ Չարմիկի Ժամհարյան (AM)
(72) Սերգեյ Չարմիկի Ժամհարյան (AM), Արամ Սերգեյի Ժամհարյան (AM)
(73) Սերգեյ Չարմիկի Ժամհարյան, Երեւան, Հայաստանի Հանրապետություն, 35, բն. 34 (AM)
(54) Սառը վերամշակված ասֆալտաբետոն
(57) Գյուտը վերաբերում է ճանապարհների շինարարությանը, մասնավորապես՝ ասֆալտաբետոնի կրկնակի օգտագործման միջոցով ասֆալտաբետոնե բաղադրանյութերի ստացմանը:
Սառը վերամշակված ասֆալտաբետոնը ներառում է, զանգվ. %. ասֆալտաբետոնի թափուներ՝ 94,0-97,0, բիտումային մածուկ. բիտում՝ 1,0-2,0, հանքային փոշի՝ 0,4-0,8, ջուր՝ մնացածը:
Ապահովվում է բարձր ֆիզիկամեխանիկական հատկություններ ունեցող ասֆալտաբետոնի ստացումը:

- (51) (2006) (11) 1915 (13) A2
C04B 38/00
C04B 20/00
C08K 13/00
(21) AM20060072 (22) 02.05.2006
(42) 03.07.2006
(71) Նինել Վադինակի Գուրգենյան (AM), Վարդգես Անդրանիկի Մանուկյան (AM)
(72) Նինել Վադինակի Գուրգենյան (AM), Վարդգես Անդրանիկի Մանուկյան (AM)
(73) Նինել Վադինակի Գուրգենյան, Երեւան, Մոլդովական 13, բն. 2 (AM), Վարդգես Անդրանիկի Մանուկյան, Երեւան, Չաքարիա Սարկավագի 151/4, բն.7 (AM)

(54) **Ջերմամեկուսիչ իրերի պատրաստման եղանակ եւ տեխնոլոգիական գիծ**

(57) Ջերմամեկուսիչ իրերի պատրաստման եղանակը ներառում է փքապեռլիտի եւ օրգանական լուծիչ ներառող կապակցանյութի խառնում, ստացված խառնուրդի ձեւավորում եւ պատրաստի իրերի չորացում, ընդ որում բաղադրամասերը խառնելուց առաջ փքապեռլիտը թրջում են օրգանական լուծիչով, իսկ խառնուրդի բաղադրամասերը վերցնում են հետեւյալ հարաբերակցությամբ, զանգվածային %. օրգանական լուծիչով թրջած փքապեռլիտ՝ 20-70, կապակցանյութ՝ 30-70:

Ջերմամեկուսիչ իրերի պատրաստման տեխնոլոգիական գիծն ունի տեխնոլոգիական հաջորդականությամբ տեղադրված եւ փոխադրման միջոցներով կապված բաժնավորիչով փքապեռլիտի բունկեր, խառնիչ, կապակցանյութի, լուծիչի բաքեր եւ փքապեռլիտի լուծիչով թրջման բաք, իրերի ձեւավորման հանգույց, չորացման ապարատ, պատրաստի իրերի ընդունիչ: Փքապեռլիտի թրջման բաքի վրա տեղակայված է լուծիչի բաքին միացված լուծիչի փոշարար: Չորացման ապարատին միացված է լուծիչի խտարարը, որը խողովակով միացված է լուծիչի մատուցման բաքին:

Բարձրացվում է ջերմամեկուսիչ իրերի ամրությունը եւ իջեցվում ջրակլանումը, 2 անկախ կետ, 1 նկ.:

- (51) (2006) (11) 1916 (13) A2
C04B 38/00
C08K 13/00
(21) AM20060071 (22) 02.05.2006
(42) 03.07.2006
(71) Նինել Վադինակի Գուրգենյան (AM), Վարդգես Անդրանիկի Մանուկյան (AM)
(72) Նինել Վադինակի Գուրգենյան (AM), Վարդգես Անդրանիկի Մանուկյան (AM)
(73) Նինել Վադինակի Գուրգենյան, Երեւան, Մոլդովական 13, բն. 2 (AM), Վարդգես Անդրանիկի Մանուկյան, Երեւան, Չաքարիա Սարկավագի 151/4, բն.7 (AM)
(54) **Ջերմամեկուսիչ իրերի պատրաստման եղանակ եւ տեխնոլոգիական գիծ**
(57) Ջերմամեկուսիչ իրերի պատրաստման ե-

դանակը ներառում է փքապեռլիտի եւ օրգանական եւ/կամ անօրգանական կապակցանյութի խառնում, ստացված խառնուրդի ձեւավորում եւ պատրաստի իրերի չորացում, ընդ որում բաղադրամասերը խառնելուց առաջ փքապեռլիտը հագեցնում են ջրով, իսկ խառնուրդի բաղադրամասերը վերցնում են հետեւյալ հարաբերակցությամբ, զանգվածային % . ջրով հագեցած փքապեռլիտ՝ 20-80, կապակցանյութ՝ 20-80:

Ջերմամեկուսիչ իրերի պատրաստման տեխնոլոգիական գիծն ունի տեխնոլոգիական հաջորդականությամբ տեղադրված եւ փոխադրման միջոցներով կապված բաժնավորիչով փքապեռլիտի բունկեր, կապակցանյութի եւ ջրի բաքեր, խառնիչ, իրերի ձեւավորման հանգույց, չորացման ապարատ եւ պատրաստի իրերի ընդունիչ: Ջրի բաքին միացված է արտաթողման ծորակ ունեցող փքապեռլիտի ջրահագեցման բաք, դրա տակ տեղակայված քամիչ եւ օգտագործած ջրի բաք, խառնիչին միացված է ջրահագեցած եւ քամած փքապեռլիտի բաք, իսկ չորացման ապարատին միացված է ջրի խտարար, ընդ որում օգտագործած ջրի բաքը եւ ջրի խտարարը խողովակներով միացված են ջրի բաքին:

Բարձրացվում է ջերմամեկուսիչ իրերի ամրությունը եւ փոքրացվում դրանց գծային ջերմաստիճանային կծկումը, 2 անկախ կետ, 1 նկ:

(51) (2006) (11) 1917 (13) A2
C04B 38/00
C08K 13/00

(21) AM20060070 (22) 02.05.2006

(42) 03.07.2006

(71) Նինել Վադինակի Գուրգենյան (AM), Վարդգես Անդրանիկի Մանուկյան (AM)

(72) Նինել Վադինակի Գուրգենյան (AM), Վարդգես Անդրանիկի Մանուկյան (AM)

(73) Նինել Վադինակի Գուրգենյան, Երեւան, Մոլդովական 13, բն. 2 (AM), Վարդգես Անդրանիկի Մանուկյան, Երեւան, Չաքարիա Սարկավագի 151/4, բն.7 (AM)

(54) **Ջերմամեկուսիչ իրերի պատրաստման եղանակ եւ տեխնոլոգիական գիծ**

(57) Ջերմամեկուսիչ իրերի պատրաստման եղանակը ներառում է փքապեռլիտի եւ կապակցանյութի խառնում, ստացված խառնուրդի ձեւավորում եւ պատրաստի իրերի չորացում, ընդ որում բաղադրամասերը խառնելուց առաջ փքապեռլիտը թրջում են ջրով, իսկ խառնուրդի բաղադրամասերը վերցնում են հետեւյալ հարաբերակցությամբ, զանգվածային % . ջրով թրջած փքապեռլիտ՝ 50-80, կապակցանյութ՝ 20-50:

Ջերմամեկուսիչ իրերի պատրաստման տեխնոլոգիական գիծն ունի տեխնոլոգիական հաջորդականությամբ տեղադրված եւ փոխադրման միջոցներով կապված բաժնավորիչով փքապեռլիտի բունկեր, կապակցանյութի, ջրի բաքեր եւ փքապեռլիտի թրջման բաք, որի վրա տեղակայված է ջրի փոշարար, հաջորդաբար տեղակայված խառնիչ, իրերի ձեւավորման հանգույց, չորացման ապարատ եւ պատրաստի իրերի ընդունիչ: Չորացման ապարատին միացված է ջրի խտարարը: Ջրի փոշարարը եւ խտարարը խողովակներով միացված են ջրի բաքին:

Բարձրացվում է ջերմամեկուսիչ իրերի ամրությունը եւ փոքրացվում դրանց գծային ջերմաստիճանային կծկումը, 2 անկախ կետ, 1 նկ:

(51) (2006) (11) 1918 (13) A2
C07C 9/00
C07C 211/00

(21) AM20060106

(22) 10.07.2006

(42) 02.10.2006

(71) Գագիկ Յովհաննեսի Թորոսյան (AM), Անուշ Լավրենտի Յարությունյան (AM), Լուսինե Անատոլիի Իսակովա (AM)

(72) Գագիկ Յովհաննեսի Թորոսյան (AM), Անուշ Լավրենտի Յարությունյան (AM), Լուսինե Անատոլիի Իսակովա (AM)

(73) Գագիկ Յովհաննեսի Թորոսյան, Երեւան, Սայաթ-Նովայի պող. 37, բն.10 (AM), Անուշ Լավրենտի Յարությունյան, Երեւան, Արծրունու 90, բն.12 (AM), Լուսինե Անատոլիի Իսակովա, Երեւան, Րաֆֆու 21, բն.16 (AM)

(54) **Էթիլ- 2-ացետիլ-4-կարբամիլպենտանոտը որպես կոմպլեքսագոյացուցիչ**

(57) Գյուտը վերաբերում է 2-ացետիլսաթաթթվի ածանցյալներին, մասնավորապես՝ Էթիլ-2-ացետիլ-4-կարբամիլպենտանոտին, որը կարող է կիրառվել որպես կոմպլեքսագոյացուցիչ:

Ացետաքացախաթթվի եթերը սենյակի ջերմաստիճանում ենթարկում են փոխազդեցու-

թյան մեթիլակրիլամիդի հետ կալիումի հիդրօքսիդի 10 նորմալային ջրային լուծույթի եւ միջֆազային կատալիզորդի առկայությամբ: Արգասիքը առանձնացնում են ռեակցիայի խառնուրդից լուծահանմամբ՝ բենզոլով:

Ապահովվում է նոր կոմպլեքսագոյացնող միացության ստացումը:

- (51) (2006) (11) 1919 (13) A2
C07C 53/00
C07C 51/00
(21) AM20060114 (22) 17.07.2006
(42) 01.08.2006
(71) Ռուզան Բաբկենի Բայաթյան (AM)
(72) Ռուզան Բաբկենի Բայաթյան (AM), Բաբկեն Էլիզումի Բայաթյան (AM), Լիդա Արշակի Սահակյան (AM)
(73) Ռուզան Բաբկենի Բայաթյան, Երեւան, Ղազաշենի 4-րդ փող. 29, բն. 17 (AM)
(54) **Կարբոնաթթուների օմեգա-բրոմանցյալների ստացման եղանակ**
(57) Գյուտը վերաբերում է օրգանական քիմիայի բնագավառին, մասնավորապես՝ $\text{Br}(\text{CH}_2)_n\text{-COOH}$, որտեղ՝ $n=4,6,8$, ընդհանուր բանաձեւի օմեգա-բրոմկարբոնաթթուների ստացման եղանակներին, եւ կարող է կիրառվել դեղագործական պատրաստուկների, հերբիցիդների, միջատասպանների, ֆունգիցիդների ստացման համար:
1,1,1,5 - քառաքլորպետանը, 1,1,1,7 - քառաքլորհեպտանը կամ 1,1,1,9 - քառաքլորնոնանը բրոմացնում են նատրիումի բրոմիդով երկմեթիլֆորմամիդի միջավայրում 60-100°C ջերմաստիճանում, անջատում են բրոմանցյալը եւ ենթարկում ծծմբաթթվական հիդրոլիզի, ստանում են համապատասխանաբար բրոմվալերիանաթթու, բրոմհեպտանաթթու կամ բրոմնոնանաթթու:
Պարզեցվում է եղանակը, բարձրացվում արգասիքների ելքը:

- (51) (2006) (11) 1920 (13) A2
C07D 487/00
(21) AM20060132 (22) 28.07.2006
(42) 02.10.2006
(71) Ռոբերտ Ղազարյան (AM), Լիդա Սահակյան

(AM), Արտակ Թովմասյան (AM), Գրիգոր Գյուլխանդանյան (AM)

(72) Ռոբերտ Ղազարյան (AM), Լիդա Սահակյան (AM), Արտակ Թովմասյան (AM), Գրիգոր Գյուլխանդանյան (AM)

(73) Ռոբերտ Ղազարյան, Երեւան, Ծովակալ Խակովի 28, բն. 11 (AM), Լիդա Սահակյան, Երեւան, Նազարեթ Սուրենյան 11բ, բն. 34 (AM), Արտակ Թովմասյան, Արարատի մարզ, Մասիս, 3-րդ թաղ. 16, բն. 29 (AM), Գրիգոր Գյուլխանդանյան, Երեւան, Եզնիկ Կողբացու 42, բն. 74 (AM)

(54) **Մանրեասպան եւ սնկասպան ակտիվություն ունեցող ֆեոֆիտինի (a+ b) արծաթե կոմպլեքս**

(57) Հայտարկված է ֆեոֆիտինի (a+b) արծաթե կոմպլեքս:

Կոմպլեքսը ստանում են համապատասխան պորֆիրինի եւ արծաթի նիտրատի փոխազդեցությամբ երկմեթիլֆորմամիդի կամ էթանոլի միջավայրում:

Կոմպլեքսն ունի մանրեասպան եւ սնկասպան ակտիվություն եւ կարող է կիրառվել բժշկության մեջ:

- (51) (2006) (11) 1921 (13) A2
C08G 85/00
(21) AM20060101 (22) 22.06.2006
(42) 01.08.2006
(71) Ռուբեն Հովհաննեսի Հալտիկյան (AM)
(72) Ռուբեն Հովհաննեսի Հալտիկյան (AM), Սվետլանա Հակոբի Ափոյան (AM)
(73) Ռուբեն Հովհաննեսի Հալտիկյան, Երեւան, Կոմիտասի 36, բն. 2 (AM)
(54) **Քլորոպրենի եւ վինիլացետատի բլոկ պատվաստված համապոլիմերի ստացման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է պոլիմերների քիմիային եւ կարող է օգտագործվել սոսինձների ստացման համար:

Պոլիքլորոպրենային «Նաիրիտ Դ» կաուչուկը եւ վինիլացետատի օլիգոմերները 10: (2-5) հարաբերակցությամբ տրվում են մինչեւ 40-50°C տաքացրած գրտնակահաստոցի վրա, երեք-չորս անգամ անց են կացնում գրտնակահաստոցով եւ ստանում քլորոպրենի եւ վինիլացետատի բլոկ պատվաստված համապոլիմեր: Որպես վինիլացետատի օլիգոմերներ նույնպես

օգտագործում են նաեւ այդ օլիգոմերները պարունակող օգտագործած ծամոնը :

Պարզեցվում է ստացման եղանակը:

- (51) (2006) (11) 1922 (13) A2
C09D 1/00
- (21) AM20060103 (22) 27.06.2006
(42) 01.08.2006
- (71) Վլադիմիր Նիկոլայի Օվչիյան (AM), Մելիդա Ֆրունզեի Կոստանոյան (AM), Յուլալ Ռուբենի Ստեփանյան (AM), Աիդա Եղիազարի Գրիգորյան (AM), Էմմա Բալաբեկի Յովհաննիսյան (AM)
- (72) Վլադիմիր Նիկոլայի Օվչիյան (AM), Մելիդա Ֆրունզեի Կոստանոյան (AM), Յուլալ Ռուբենի Ստեփանյան (AM), Աիդա Եղիազարի Գրիգորյան (AM), Էմմա Բալաբեկի Յովհաննիսյան (AM)
- (73) Վլադիմիր Նիկոլայի Օվչիյան, Երեւան, Սունդուկյան 28ա, բն. 35 (AM), Մելիդա Ֆրունզեի Կոստանոյան, Երեւան, Վահր. Փափազյան 16ա, բն. 66 (AM), Յուլալ Ռուբենի Ստեփանյան, Երեւան, Կոմիտասի պող. 2-րդ նրբ. 15 (AM), Աիդա Եղիազարի Գրիգորյան, Երեւան, Մելքումովի 39, բն. 1 (AM), Էմմա Բալաբեկի Յովհաննիսյան, Երեւան, Գրիբոյեդովի 5ա, բն. 33 (AM)
- (54) **Սիլիկատային օրգանական ներկ**
- (57) Գյուտը վերաբերում է պատվածքների բաղադրություններին, մասնավորապես՝ օրգանական նյութերով բարեփոխված բարձրամոդուլային հեղուկ ապակու հիմքով սիլիկատային օրգանական ներկերին, որոնք կարող են կիրառվել մետաղները կոռոզիայից պաշտպանելու համար:
- Ներկը ներառում է (զանգվ.%) հեղուկ ապակի՝ 50-60, բարեփոխիչ՝ 8-10, գունանյութի եւ լցանյութի խառնուրդ՝ 30-40: Բարեփոխիչը իրենից ներկայացնում է զանգվածային 2,0:4,0:1,0:2,5:2,0 հարաբերակցությամբ վերցված էթինոլ լաքի, բենեկնախեժի, ֆուրֆուրոլի, վուշի յուղի եւ միզանյութի խառնուրդ:
- Բարձրացվում են ներկի հիման վրա ստացված պատվածքների ֆիզիկամեխանիկական եւ պաշտպանիչ հատկությունները:

- (71) «ՄԵՏՏԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ (AM)
- (72) Սերգեյ Յայրապետյան (AM), Անատոլի Բայրամյան (AM), Վլադիմիր Գասպարյան (AM)
- (73) «ՄԵՏՏԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ, Երեւան, Արդուրյան 10 (AM)
- (54) **Սիլիկատային ներկ**
- (57) Գյուտը վերաբերում է պատվածքների բաղադրություններին, մասնավորապես՝ բարձրամոդուլ հեղուկ ապակու հիմքով սիլիկատային ներկերին, որոնք կարող են կիրառվել մետաղյա, փայտե եւ այլ մակերեսները պատելու համար:
- Ներկը ներառում է (զանգվ.%) կալիումական կամ նատրիումական հեղուկ ապակի՝ 60.0-75.0, լցանյութ՝ 20.0-30.0, գունանյութ՝ 3.0-8.0, ընդ որում լցանյութը դիատոմիտ է:
- Բարելավվում են ներկի ֆիզիկամեխանիկական եւ պաշտպանիչ հատկությունները:

- (51) (2006) (11) 1924 (13) A2
C09J 4/00
- (21) AM20060100 (22) 22.06.2006
(42) 01.08.2006
- (71) Ռուբեն Յովհաննեսի Չալտիկյան (AM)
- (72) Ռուբեն Յովհաննեսի Չալտիկյան (AM), Սվետլանա Յակոբի Ափոյան (AM)
- (73) Ռուբեն Յովհաննեսի Չալտիկյան, Երեւան, Կոմիտասի 36, բն. 2 (AM)
- (54) **Սոսնձային բաղադրանյութ**
- (57) Գյուտը վերաբերում է պոլիմերների քիմիային եւ կարող է օգտագործվել արհեստական ու բնական կաշիներ, փայտ, մետաղ, պլաստմասսա սոսնձելու համար:
- Բաղադրանյութը ներառում է հետեւյալ բաղադրամասերը, զանգվ.%. քլորոպրենի եւ վինիլացետատի բոլոր պատվաստված համապոլիմեր՝ 11,7-12,2, 1,5-երկամիկապրոնաթթու՝ 0,1-0,2, ցինկի օքսիդ՝ 2,1-2,3, իդենկումարոնային խեժ՝ 4,8-5,3, քլորնաիրիտ՝ 2,7-3,1, բենզին «Գալոշա»՝ 36,0-39,5, Էթիլացետատ՝ 36,0-39,5:
- Բարձրացվում են բաղադրանյութի քիմիական կայունությունը եւ սոսնձող հատկությունները:

- (51) (2006) (11) 1923 (13) A2
C09D 1/00
- (21) AM20060107 (22) 11.07.2006
(42) 01.08.2006

- (51) (2006) (11) 1925 (13) A2
C12N 1/20
- (21) AM20060052 (22) 05.04.2006
(42) 03.07.2006

(71) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Սուրեն Լեւոնի Գրիգորյան (AM), Արթուր Ռոբերտի Մկրտչյան (AM), Մարտին Հակոբի Հովհաննիսյան (AM)

(73) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երեւան, Տերյան 74 (AM)

(54) Սնուցիչ միջավայր անաերոբ մանրէների աճեցման համար

(57) Գյուտը վերաբերում է մանրէների սնուցիչ միջավայրերին եւ կարող է օգտագործվել անասնաբուժական եւ բժշկական մանրէաբանության մեջ:

Սնուցիչ միջավայրը ներառում է ամինային ազոտի աղբյուր եւ վերականգնող նյութ: Ամինային ազոտի աղբյուր է հանդիսանում հացաթխման խմորամսկերի ավտոլիզատը ֆիզիոլոգիական լուծույթում, իսկ վերականգնող նյութ՝ կարտոֆիլը, բաղադրամասերի հետեւյալ հարաբերակցությամբ (գանգվ. %). հացաթխման խմորամսկերի ավտոլիզատ՝ 42, ֆիզիոլոգիական լուծույթ՝ 42, կարտոֆիլ՝ 16:

Ապահովվում է անաերոբ մանրէների արագ աճը եւ բարձր խտություն:

(51) (2006) (11) 1926 (13) A2
C12N 1/20

(21) AM20060082 (22) 18.05.2006
(42) 01.08.2006

(71) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Սուրեն Լեւոնի Գրիգորյան (AM), Մարտին Հակոբի Հովհաննիսյան (AM), Մարիամ Արմենակի Սարգսյան (AM)

(73) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երեւան, Տերյան 74 (AM)

(54) Մանրէների աճեցման սնուցիչ միջավայրի պատրաստման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է սնուցիչ միջավայրի պատրաստման եղանակներին եւ կարող է օգտագործվել մանրէաբանության տարբեր ոլորտներում:

Համաձայն եղանակի, 3-35-օրական ճագարների մկանային հյուսվածքներից, սրտից, թոքերից, լյարդից, փայծաղից, ավշահանգույցներից, երիկամներից, մակերիկամներից, արյունից, ենթաստամոքսային գեղձից, ուղեղից, լեզվից, մաշկից, ոսկրային հյուսվածքներից եւ լեզվանյութից պատրաստում են խյուս: Խյուսը նստրացնում են ջրով ծավալային 1:10 հարաբերակցությամբ, հասունացնում 6-16 ժամվա ընթացքում սենյակային ջերմաստիճանում եւ զտում: Ստացված սնուցիչ միջավայրի pH-ը հասցնում են 7.2 արժեքի:

Բարձրացվում է մանրէների աճի ինտենսիվությունը:

(51) (2006) (11) 1927 (13) A2
C12P 13/10

(21) AM20060074 (22) 02.05.2006
(42) 01.08.2006

(71) «Կենսատեխնոլոգիայի ԳՀԻ» ՓԲԸ (AM)

(72) Ծովինար Ռաֆիկի Բալաբեկյան (AM), Ֆլորա Նուբարի Տիրունի (AM), Անդրանիկ Հակոբի Վարդանյան (AM), Արմեն Եղիշի Աղաջանյան (AM), Յուրի Իվանի Ավագյան (AM), Աշոտ Սերոբի Սաղյան (AM)

(73) «Կենսատեխնոլոգիայի ԳՀԻ» ՓԲԸ, Երեւան, Գյուրջյան 14 (AM)

(54) L - օրնիթինի միահիդրոքլորիդի ստացման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է մանրէաբանական արդյունաբերությանը, մասնավորապես՝ ամինաթթուների ստացման եղանակներին:

L-օրնիթին արտադրող *Corynebacterium glutamicum* ԴԱ-8 (BKPM B-4240) մանրէների շտամը աճեցնում են լիարժեք սնուցիչ միջավայրում: Կուլտիվացման սկզբնական փուլում կուլտուրայի աճը իրականացնում են pH 7.6-7.8 արժեքներում, իսկ հետագա փուլում՝ pH 7.2-7.4 արժեքներում եւ ազոտով ու շաքարով աստիճանական լրասնուցմամբ: Կուլտուրալ հեղուկից L-օրնիթինը անջատում են սորբումով: Սորբումը կատարում են NH₄⁺-ձևի KY-2-8 սուլֆոկատիոնիտով, ընդ որում հավասարակշռային լուծույթը ունի pH 3.0-3.5 արժեքը, իսկ արգասիքի դետորբումն իրականացնում են 3.5 - 4.0% ամոնիակի ջրային լուծույթով:

Ապահովվում է նպատակային արգասիքի ելքի բարձրացումը եւ ուղեկցող ամինաթթուների գումարային ելքի նվազեցումը:

(51) (2006) (11) 1928 (13) A2
C22B 34/00
C22B 1/00
C22B 61/00
(21) AM20060069 (22) 28.04.2006
(42) 02.10.2006
(71) Կլիմենտ Ենոքի Հակոբյան (AM), Հոնգ Յոնգ Սոհն (US)
(72) Կլիմենտ Ենոքի Հակոբյան (AM), Հոնգ Յոնգ Սոհն (US), Արմեն Կլիմենտի Հակոբյան (AM), Էդգար Ռոդոլֆ Բլանկո (US), Ռոման Շմալտ-նի Նավասարդյան (AM), Վլադիմիր Ալեքսանդրովիչ Բրյուկվին (RU), Վլադիմիր Գիլեվիչ Լեոնտեվ (RU), Օլեգ Իվանովիչ Ցիբին (RU)
(73) Կլիմենտ Հակոբյան, Սյունիքի մարզ, Կապան, Թումանյան 9, բն.25 (AM), Հոնգ Յոնգ Սոհն, Յու-թա, Սոլթ Լեյք Սիթի, Յուպիթեր Դր. 4521 (US)
(54) **Մոլիբդենի սուլֆիդի խտանյութի վերամշակման եղանակ**

(57) Մոլիբդենի սուլֆիդի խտանյութը թրծում են գազային միջավայրում 900-1000°C ջերմաստիճանում՝ խտանյութը եւ գազը հակառու մատուցելով ռեակտոր, որից հետո մշակում են հեռացող գազերը՝ ստանալով տարրական ծծումբ, ապա ռենիում պարունակող օքսիդացված մոլիբդենային միջանկյալ արգասիքը օքսիդացնող թրծմամբ 400-480°C ջերմաստիճանում՝ ստանում են մոլիբդենի եռօքսիդ եւ ռենիում պարունակող գազ: Որպես գազային միջավայր օգտագործում են զանգվածային (7-8) : 1 հարաբերակցությամբ ջրային գոլորշու եւ օդի խառնուրդ, իսկ խտանյութի եւ գազային միջավայրի զանգվածային հարաբերակցությունը 1 : (4,5-8,0) է:

Ապահովվում է խտանյութի վերամշակման եղանակի պարզեցումը եւ ինտենսիվացումը, ինչպես նաեւ խտանյութի մեջ պարունակվող բոլոր բաղադրիչների կորզումը:

(51) (2006) (11) 1929 (13) A2
C23C 12/00
(21) AM20060120 (22) 24.07.2006
(42) 01.08.2006
(71) Կարեն Գուրգենի Կարապետյան (AM)
(72) Կարեն Գուրգենի Կարապետյան (AM)
(73) Կարեն Գուրգենի Կարապետյան, Երեւան, Արին-Բերդի 3, բն. 6 (AM)
(54) **Կարծրահամահալվածքային գործիքանյութերի մշակման եղանակ**
(57) Գյուտը վերաբերում է կարծրահամահալվածքային գործիքանյութերի մշակման եղանակներին:

Կարծրահամահալվածքային գործիքանյութը յուղազերծում են, ընկղմում ամոնիումի պեր-ռենատի 20 - 22 % - անոց լուծույթի մեջ, չորացնում 70 - 80°C ջերմաստիճանում, տաքացնում ջրածնի միջավայրում 1100 - 1150°C ջերմաստիճանում, այդ ջերմաստիճանում պահում 2 - 5 ժամվա ընթացքում, հովացնում, ապա չորացնում 90 - 100°C ջերմաստիճանում եւ ենթարկում թրծաթողման 300 - 350°C ջերմաստիճանում:

Բարձրացվում է գործիքանյութերի մաշակայունությունը:

(51) (2006) (11) 1930 (13) A2
C23C 12/00
(21) AM20060122 (22) 24.07.2006
(42) 01.08.2006
(71) Կարեն Գուրգենի Կարապետյան (AM)
(72) Կարեն Գուրգենի Կարապետյան (AM)
(73) Կարեն Գուրգենի Կարապետյան, Երեւան, Արին-Բերդի 3, բն. 6 (AM)
(54) **Կարծրահամահալվածքային գործիքանյութերի մշակման եղանակ**
(57) Գյուտը վերաբերում է կարծրահամահալվածքային գործիքանյութերի մշակման եղանակներին:

Կարծրահամահալվածքային գործիքանյութը յուղազերծում են, ընկղմում ամոնիումի պեր-ռենատի փոշու մեջ, տաքացնում ջրածնի միջավայրում 1100-1150°C ջերմաստիճանում, այդ ջերմաստիճանում պահում 1,5-3 ժամվա ընթաց-

քում, հովացնում, չորացնում 90-95°C ջերմաստիճանում եւ ենթարկում թրծաթողման 350-400°C ջերմաստիճանում:

Բարձրացվում է գործիքանյութերի մաշակայունությունը:

(51) (2006) (11) 1931 (13) A2
C23C 12/00

(21) AM20060121 (22) 24.07.2006

(42) 01.08.2006

(71) Կարեն Գուրգենի Կարապետյան (AM), Գուրգեն Սարգիսյանի Յովսեփյան (AM)

(72) Կարեն Գուրգենի Կարապետյան (AM), Գուրգեն Սարգիսյանի Յովսեփյան (AM)

(73) Կարեն Գուրգենի Կարապետյան, Երեւան, Արին-Բերդի 3, բն. 6 (AM), Գուրգեն Սարգիսյանի Յովսեփյան, Երեւան, Թոթովենցի 1/1, բն. 35 (AM)

(54) Կարծրահամահալվածքային գործիքանյութերի մշակման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է կարծրահամահալվածքային գործիքանյութերի մշակման եղանակներին:

Կարծրահամահալվածքային գործիքանյութը յուղագերծում են, ընկղմում ռենիումի օքսիդի փոշու մեջ, տաքացնում մթնոլորտի միջավայրում 500 - 600°C ջերմաստիճանում, այդ ջերմաստիճանում պահում 1 - 3 ժամվա ընթացքում, հովացնում եւ ենթարկում թրծաթողման 200 - 250°C ջերմաստիճանում:

Բարձրացվում է գործիքանյութերի մաշակայունությունը:

(51) (2006) (11) 1932 (13) A2
E21C 41/00

E21C 41/26

(21) AM20060127 (22) 26.07.2006

(42) 02.10.2006

(71) Մաքսիմ Հակոբյան (AM), Բորիկ Մկրտչյան (AM)

(72) Մաքսիմ Հակոբյան (AM), Բորիկ Մկրտչյան (AM), Կարեն Մկրտչյան (RU), Վահե Հակոբյան (AM)

(73) Մաքսիմ Հակոբյան, Սյունիքի մարզ, Զաջարան, Չարենցի 5, բն.4 (AM), Բորիկ Մկրտչյան, Երեւան, Գայի պող. 4, բն.109 (AM)

(54) Օգտակար հանածոների հանքավայրերի բաց մշակման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է հանքարդյունաբերությանը եւ կարող է օգտագործվել լեռնային բացահանքերի շահագործման ժամանակ:

Հանքամարմնի կենտրոնում անցկացնում են հանքիջանցք, վերջինիս ուղղությամբ անցնում են թեք խրամ, որը հորիզոնական ուղղությամբ զարգացնելով միացնում են հանքիջանցքի հետ: Այնուհետեւ թեք խրամի փորվածքը փոխուղղահայաց ուղղություններով դեպի բացահանքի եզրերը զարգացնելով, ձեւավորում են միմյանց հետ խաչվող, կտրող խրամներ: Հանքիջանցքը տեղակայում են մեկից ավելի հանքաստիճաններով մշակվող հանքամարմնի բաղկացուցիչ չորս զանգվածներից մեկի կենտրոնական եզրի մոտ: Վերջինիս վրա ձեւավորում են հանքաթեքատներ, որոնց միջոցով հանքամարմնի զանգվածի հորիզոնների հարթակները միացնում են հանքիջանցքի հետ: Թեք խրամին հարող մյուս երկու հանքամարմինների զանգվածների հանույթն իրականացնում են կտրող խրամների զարգացմանը զուգահեռ՝ կենտրոնից դեպի բացահանքի եզրերը: Կտրող խրամների ձեւավորման ավարտից հետո հանքամարմնի զանգվածների հարակից մշակումը տանում են բացահանքի եզրերից՝ մեկը մյուսին ընդառաջ:

Բարձրացվում է եղանակի ինտենսիվությունը, 2 նկ.:

(51) (2006) (11) 1933 (13) A2

E21C 41/00

E21C 41/26

(21) AM20060128 (22) 26.07.2006

(42) 02.10.2006

(71) Մաքսիմ Հակոբյան (AM), Բորիկ Մկրտչյան (AM)

(72) Մաքսիմ Հակոբյան (AM), Բորիկ Մկրտչյան (AM), Կարեն Մկրտչյան (RU), Վահե Հակոբյան (AM)

(73) Մաքսիմ Հակոբյան, Սյունիքի մարզ, Զաջարան, Չարենցի 5, բն.4 (AM), Բորիկ Մկրտչյան, Երեւան, Գայի պող. 4, բն.109 (AM)

(54) Օգտակար հանածոների հանքավայրերի բաց մշակման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է հանքարդյունաբերությանը եւ կարող է կիրառվել օգտակար հանածոների հանքավայրերի բաց մշակման ժամանակ:

Հանքամարմնի կենտրոնում անցկացնում են հանքիջանցք, վերջինիս ուղղությամբ անցնում են թեք խրամ, որը հորիզոնական ուղղությամբ զարգացնելով միացնում են հանքիջանցքի հետ: Այնուհետև հանքիջանցքի մոտ ձեւավորում են միմյանց խաչվող փոխուղղահայաց խրամներ, դրանք ձեւավորում են հորիզոնական, բացահանքի կենտրոնից դեպի եզրերը: Խրամների եւ դրանցով առանձնացվող հանքամարմնի բաղկացուցիչ զանգվածների հանույթն իրականացնում են հանքիջանցքին հարող մասերից դեպի բացահանքի եզրերը, իսկ կից հանքաստիճանները մշակում են բացահանքի եզրերից՝ մեկը մյուսին ընդառաջ:

Բարձրացվում է եղանակի ինտենսիվությունը, 1 նկ.:

(51) (2006) (11) 1934 (13) A2
F02B 75/32

(21) AM20060029 (22) 22.02.2006

(42) 03.07.2006

(71) Կոլյա Շահնազարյան (AM)

(72) Կոլյա Շահնազարյան (AM)

(73) Կոլյա Շահնազարյան, Լոռու մարզ, գյուղ Շնող (AM)

(54) **Ներքին այրման շարժիչ ըստ Շահնազարյանի**

(57) Գյուտը վերաբերում է շարժիչներին եւ կարող է օգտագործվել տրանսպորտային միջոցներում: Ներքին այրման շարժիչն ունի ելքային լիսեռ, առնվազն մեկ զույգ իրար հակադիր գլաններով իրան եւ թեք ճակատային մակերեւույթներով մխոցներ իրենց մխոցակոթերով: Մխոցակոթն իր սկզբնամասում ունի իրեն ուղղահայաց ձող, որի վրա տեղադրված են հոլովակներ, որոնք հպվում են ելքային լիսեռին անշարժ ամրակցված միեւնույն պրոֆիլի սկավառակաձեւ արտաքին եւ ներքին ապակենտրոն վազքուղիներով բռունցքներին, իսկ մխոցակոթերի վերջնամասերը տեղակայված են իրանին ամրակցված եւ սկավառակաձեւ բռունցքի հակադիր կողմերում գտնվող ուղղորդիչների մեջ: Հոլովակներից միջինը հպվում է արտաքին վազքուղիով բռունցքին, իսկ ձողի հակադիր ծայրամասերում գտնվող երկու հոլովակները հպվում են իրենց տրամագծով ավելի մեծ ներքին վազքուղիներով այլ երկու բռունցքներին: Ներքին վազքուղիներով բռունցքների վազքուղիների մակերեւույթը կոնաձեւ է: Մխոցի ճակատային մակերեւույթը զուգահեռ է հոլովակի եւ արտաքին վազքուղիով բռունցքի շփման կետի շոշափողին, իսկ ելքային լիսեռին ուղղահայաց հարթության նկատմամբ մխոցների շարժման առանցքներն ունեն կողմնային տեղաշարժ:

Պարզեցվում է կառուցվածքը, բարձրացվում է օ.գ.գ.-ն, 8 նկ:

(51) (2006) (11) 1935 (13) A2
F16H 21/00

(21) AM20060099

(22) 21.06.2006

(42) 02.10.2006

(71) Լեւոն Թումանի Մանանդյան (AM), Վանիկ Գրիգորի Աղամյան (AM), Գեւորգ Միքայելի Չալիմյան (AM), Արմեն Լեւոնի Մանանդյան (AM)

(72) Լեւոն Թումանի Մանանդյան (AM), Վանիկ Գրիգորի Աղամյան (AM), Գեւորգ Միքայելի Չալիմյան (AM), Արմեն Լեւոնի Մանանդյան (AM)

(73) Լեւոն Թումանի Մանանդյան, Գյումրի, Տիգրան Մեծի 116/088 (AM), Վանիկ Գրիգորի Աղամյան, Գյումրի, 26 Կոմիսարների 82ա (AM), Գեւորգ Միքայելի Չալիմյան, Գյումրի, Մանուշյան 231/203 (AM), Արմեն Լեւոնի Մանանդյան, Գյումրի, Տիգրան Մեծի 116/088 (AM)

(54) **Կուլիսալծակային պարաբոլագրիչ**

(57) Գյուտը վերաբերում է մեխանիկայի բնագավառին, մասնավորապես՝ կենտրոնական ուժի դաշտում պարաբոլական ուղեծրով շարժվող կետի դիրքը որոշող սարքերին:

Սարքն ունի անշարժ ուղղորդ, ծնկավոր լծակ, որին հողակապորեն միացված են ձողերից եւ սողաններից կազմված երկու օղակ, որոնց վրայով սահող սողանների միջոցով գծվում է պարաբոլ, որի պարամետրը հավասար է ծնկավոր լծակի մի ծնկի երկարությանը, իսկ ծնկավոր լծակի մյուս ծունկն անցնում է պարաբոլի կիզակետում տեղակայված հողակապային օղակի միջով: Սարքն ունի լրացուցիչ լծակ, որի վրա արված է ակոս: Լրացուցիչ լծակի մի ծայրը հողակապորեն միացված է պարաբոլի կիզակետում տեղակայված օղակի պտտման կենտրոնին, մյուս ծայրը՝ անշարժ ուղղորդով սահող հողակապին: Լրացուցիչ լծակի վրա սահելու հնա-

րավորությամբ տեղակայված է սողանից եւ ձողից կազմված օղակ, որի ձողի ուղղությունն իրենից ներկայացնում է տվյալ պահին կետի արագության ուղղությունը:

Ընդլայնվում են մեխանիզմի ֆունկցիոնալ հնարավորությունները, 2 նկ.:

(51) (2006) (11) 1936 (13) A2
F16H 29/00

(21) AM20060102 (22) 26.06.2006
(42) 02.10.2006

(71) Արման Յովհաննիսյան (AM)

(72) Արման Յովհաննիսյան (AM)

(73) Արման Յովհաննիսյան, Երեւան, Գրիգոր Լուսավորչի 12, բն. 2ա (AM)

(54) Փոխանցումների տուփ

(57) Փոխանցումների տուփն ունի ուղղորդող եւ ուղղորդվող հանգույցներ՝ իրենց լիսեռներով: Հանգույցները տեղակայված են իրար համաչափ: Հանգույցների լիսեռների վրա ուղղահայաց կոշտ ամրակցված են ձողեր, որոնց վրա հագցված են դրանց վրա շարժվելու հնարավորություն ունեցող սկամեջ գլանիկներ, իսկ հանգույցների լիսեռների վրա հագցված են սկամեջ գլաններ, որոնց արտաքին մակերեսային փորված է ատամնաձող: Ատամնաձողերի հետ կառուցման հնարավորություն ունեն հիդրավլիկ սնուցման աղբյուրին միակցված ատամնանիվները: Գլանիկները շարժաձողերի միջոցով միացված են գլաններին: Ուղղորդող եւ ուղղորդվող հանգույցների գլանիկները փոխկապակցված են իրար փոխադրուցավոր միացմամբ:

Պարզեցվում են կառուցվածքը եւ աշխատանքի սկզբունքը, 10 նկ.:

(51) (2006) (11) 1937 (13) A2
F41G 1/00

(21) AM20060109 (22) 13.07.2006
(42) 02.10.2006

(71) Վանիկ Գրիգորի Ադամյան (AM), Մարտին Նազարի Կարապետյան (AM), Գեորգ Միքայելի Չալիմյան (AM), Լեւոն Թումանի Մանանդյան (AM)
(72) Վանիկ Գրիգորի Ադամյան (AM), Մարտին Նազարի Կարապետյան (AM), Գեորգ Միքայելի Չա-

լիմյան (AM), Լեւոն Թումանի Մանանդյան (AM) (73) Վանիկ Գրիգորի Ադամյան, Գյումրի, 26 Կոմսարների 82ա (AM), Մարտին Նազարի Կարապետյան, Երեւան, Անդրանիկի 80, բն.18 (AM), Գեորգ Միքայելի Չալիմյան, Գյումրի, Մանուշյան 231/203 (AM), Լեւոն Թումանի Մանանդյան, Գյումրի, Տիգրան Մեծի 116/088 (AM)

(54) Հրետանային նշանոցի մեխանիկական հանգույց

(57) Գյուտը վերաբերում է զենքերին, մասնավորապես՝ հրետանային նշանոցների մեխանիկական հանգույցներին, եւ կարող է օգտագործվել դրանք նպատակակետին նշանառելու գործընթացում:

Սարքն ունի իրան, իրանին կոշտ ամրակցված առաջին՝ վերին եւ երկրորդ հողակապեր, որոնք դիրքավորված են ուղղաձիգ գծով եւ որոնց միջոցով իրանին միակցված է հողակապավոր հավասարակողմ քառօղակ մեխանիզմ: Սարքն ունի նաեւ հորիզոնական ուղղորդ, որը տեղակայված է իրանի առաջին հողակապի մակարդակով եւ առնվազն մեկ ծայրով կոշտ ամրակցված է իրանին, կուլիս եւ ճոճալծակ, որոնք մեկ ծայրով հողակապորեն միակցված են իրանի երկրորդ հողակապին: Կուլիսը հողակապավոր սողնակի միջոցով կապված է քառօղակի հանդիպակաց հողակապին: Ճոճալծակը փոխուղղահայաց անցքերով կցորդիչի եւ սրանով անցնող հողակապավոր շարժաթելի միջոցով կապված է հորիզոնական ուղղորդի վրա տեղակայված սողնակին: Առաջին եւ երկրորդ հողակապերի հետ միեւնույն ուղղաձիգ ուղղի վրա իրանին կոշտ ամրակցված է երրորդ՝ ստորին հողակապը, որի վրա տեղակայված է երկրորդ կուլիսը: Ուղղորդի սողնակին հողակապորեն միակցված է երկրորդ սողնակը, որով անցնում է երկրորդ կուլիսը:

Ընդլայնվում են ֆունկցիոնալ հնարավորությունները, 2 նկ.:

(51) (2006) (11) 1938 (13) A2
F41G 1/00

(21) AM20060110 (22) 13.07.2006
(42) 02.10.2006

(71) Վանիկ Գրիգորի Ադամյան (AM), Մարտին Նազարի Կարապետյան (AM), Լեւոն Թումանի Մանանդյան (AM), Գեորգ Միքայելի Չալիմյան (AM)

(72) Վանիկ Գրիգորի Աղամյան (AM), Մարտին Նազարի Կարապետյան (AM), Լեւոն Թումանի Մանանդյան (AM), Գեւորգ Միքայելի Չայիմյան (AM)
(73) Վանիկ Գրիգորի Աղամյան, Գյումրի, 26 Կոմիսարների 82ա (AM), Մարտին Նազարի Կարապետյան, Երեւան, Անդրանիկի 80, բն.18 (AM), Լեւոն Թումանի Մանանդյան, Գյումրի, Տիգրան Մեծի 116/088 (AM), Գեւորգ Միքայելի Չայիմյան, Գյումրի, Մանուշյան 231/203 (AM)

(54) Հրետանային նշանոց

(57) Գյումրի վերաբերում է գեներալին, մասնավորապես՝ հրետանային նշանոցներին, եւ կարող է օգտագործվել դրանք նպատակակետին նշանառելու գործընթացում:

